

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես, Հովհաննես Ռոբերտի Չիլինգարյանս, ծնվել եմ Կիրովական քաղաքում (Կիրովական Վանաձոր) 27 մարտի 1977թ.-ին:

1984թ.-ից հաճախել եմ և 1994թ.-ին ավարտել եմ Վանաձորի թիվ 14 միջնակարգ դպրոցը:

1995թ.-ին ընդունվել եմ Մոսկվայի <Կոմերցիայի և իրավունքի ինստիտուտ> իրավագիտություն բաժին:

1995-1997թ.թ. ծառայել եմ ՀՀ զինված ուժերում:

Ծառայությունս վերջացնելուց հետո, շարունակել եմ 2000թ.-ին ավարտել եմ ուսումս, ստացել իրավագիտության բակալավրի աստիճան <իրավագիտություն> մասնագիտությամբ:

2001թ. հոկտեմբերի 24-ին ընդունվել եմ աշխատանքի, որպես դատավորի օգնական, ՀՀ տնտեսական դատարանի Լոռու նստավայրում:

2002թ. Ընդունվել եմ Վանաձորի <Մխիթար Գոշ> հայ-ռուսական միջազգային համալսարան և 2003թ. հունիսի 22-ին ավարտել ուսումս, ստանալով իրավագետի մասնագիտություն:

2006թ. հունիսի 25-ին ազատվել եմ աշխատանքից սեփական դիմումիս համաձայն:

2006թ. հուլիսի 25-ին ընդունվել եմ աշխատանքի <ՀայՌուսագաղարդ> ՓԲԸ Լոռու ԳԳՄ որպես իրավաբան պայմանագրային հիմունքներով:

2007թ. օգոստոսի 06-ին ազատվել եմ աշխատանքից դիմումիս համաձայն:

2008թ. հունվարի 29-ին ընդունվել եմ աշխատանքի ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում, դատավորի օգնականի պաշտոնում:

2011թ. հուլիսի 01-ին ազատվել եմ աշխատանքից դիմումիս համաձայն:

Ընտանիքով մեկնել եմ ՌԴ Կրասնոդարի երկրամաս, որտեղ մինչև 2015թ. մայիս ամիսը աշխատել եմ մասնավոր ընկերությունում որպես մենեջեր- կառավարիչ:

Ամուսնացած եմ, ունեմ երկու զավակ:

Հ. Ռ. Չիլինգարյան

